Համաձայնագիր N 1

2019 թվականի փետրվարի 06-ին կնքված «Պետության կարիքների համար պահնորդական ծառայությունների մատուցման» N «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք. Երևան «06» օգոստոսի 2019թ.

ՀՀ կառավարության ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս տեսչական մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանի, որը գործում է տեսչական մարմնի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ԷԼ-ԷՆ Գարդ Սիսիտեմս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ժ. Բաբայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից և վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Վճարող)՝ հիմք ընդունելով 2019 թվականի փետրվարի 06-ին կնքված «Պետության կարիքների համար պահնորդական ծառայությունների մատուցման» N «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի 7.5 և 7.13 կետերը (այսուհետ՝ Պայմանագիր) և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետը, եռակողմ համաձայնությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1730-Ն որոշման 2.1 կետի 5-րդ ենթակետը Վճարող կողմը պարտավորվում է Պայմանագրով սահմանված պահնորդական ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) դիմաց կատարել վճարումներ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի:

1.2 Պայմանագրի Հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մատուցման ժամկետ սյունյակում «2019թ. հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2019թ. մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը» բառերով:

1.3 Սահմանել, որ Պատվիրատուն Պայմանագրի 1 կետով նախատեսված Ծառայությունների դիմաց վճարում է պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն համաձայնագրի N1 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցին համապատասխան:

1.4 Հաստատել Պայմանագրի Վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի N1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և տարածվում կողմերի միջև 2019 թվականի մարտի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում չնշված կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 3 (երեք) էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ՎՃԱՐՈՂ
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին ք.Երևան, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00454227 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	«ԷԼ-ԷՆ Գարդ Սիստեմս» ՍՊԸ Կոտայքի մ., ք. Չարենցավան 7 թաղ., 8 շենք, 18 բն. «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2470100959970010 ՀՎՀՀ 02808926 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900013001061 ՀՎՀՀ 02505554 ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 06 » օգոստոսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111120/1	Պահնորդական ծառայություններ	-	-	-	-	-	-	-	1 975 000	1 975 000	3 950 000	3 950 000	3 950 000	**3 950 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԵ սննդամթերքի
անվտանգության տեսչական մարմին
ք.Երևան, Կոմիտաս 49/2
ՀՎՀՀ 00454227

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԼ-ԷՆ Գարդ Սիստեմս» ՍՊԸ
Կոտայքի մ., ք. Չարենցավան 7 թաղ.,
8 շենք, 18 բն.
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100959970010
ՀՎՀՀ 02808926

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՈՂ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության
հրապարակ, Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900013001061
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.